

ՀՀ ԸՆԴՀԻՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ 2011-2015ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2013Թ. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ / ձև 2 /

Հ/ h	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	<<Ընդդեմ գենդերային բռնության>> խորագրով հեռուստատեսային քննարկումների կազմակերպում	Տվյալ խորագրով հարցի շուրջ մարզի հեռուստատեսությունների միջոցով տեղի են ունեցել բանավեճ-քննարկումներ, ինչպես նաև մարզային երիտասարդական կենտրոնում երիտասարդների մասնակցության շրջանակում նույնպես իրականացվել է <<Ընդդեմ գենդերային բռնության>> խորագրով բանավեճ, իսկ արդյունքները փոխանցվել են մարզի ԶԼՄ-ներին	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	<<Արվեստի դերը գենդերային բռնության դեմ պայքարի գործում. Գեղեցիկը և բռնությունը>> թեմայով կլոր սեղան-բանավեճի կազմակերպում մշակութային հաստատությունների աշխատողների համար	Մայիսի 17-ին Արովյանի երաժշտական դպրոցում կազմակերպվել է նշված թեմայով կլոր- սեղան բանավեճ: Մասնակցել են մշակութային հաստատությունների աշխատողներ, մարզի արվեստագետներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մարզխորհրդի նիստ <<Գենդերային անհավասարությունը և բռնությունը որպես ներընտանեկան կոնֆլիկտների և ամուսնալուծությունների պատճառ>>	Մարզխորհրդի նիստում (27.09.2013թ.) համայնքի ղեկավարների քննարկմանն է ներկայացվել <<Ընտանիքի, կանանց իրավունքների և գենդերային բռնության երևույթների մասին>> հարցը:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	<<Ընդդեմ գենդերային բռնության 16 օրյակի>> քարոզարշավի շրջանակներում կլոր սեղանների կազմակերպում կանանց և երեխաների նկատմամբ բռնության և թրաֆիքինգի հարցերի քննարկում համայնքների ղեկավարների մասնակցությամբ	<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> քարոզարշավի շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան Եղվարդ, Սոլակ, Չարենցավան համայնքներում՝ գենդերային բռնության հիմնախնդրի շրջանակներում ներկայացվել է մարզում կատարված ներընտանեկան բռնության դեպքերի վերլուծություն և իրազեկում	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի ծրագրով մարզում նախատեսված միջոցառումների լուսաբանում, տարվա ընթացքում հիշյալ թեմաների շրջանակներում կազմակերպված լուսաբանման աշխատանքների ամփոփում և վերլուծություն	Ընդդեմ գենդերային բռնության 2013 թվականի ծրագրով մարզում նախատեսված միջոցառումների լուսաբանման աշխատանքները կատարվել են ներընտանեկան բռնության դեպքերը վեր հանելու, դրանց կանխարգելման նպատակով իրազեկում կատարելու համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
6.	Գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և գենդերային	Հրազդանի, Չարենցավանի, Կոտայքի և Նաիրիի տարածաշրջանների հանրակրթական դպրոցների	Ֆինանսավորում չի պահանջվում

<p>զգայնության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների և մանկավարժների համար</p>	<p>տնօրենների և մանկավարժների համար նախատեսված միջոցառումների, խորհրդակցությունների և սեմինար պարապամունքների ժամանակ անդրադարձ է եղել գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների հաղորդման և գենդերային զգայնության բարձրացմանը միտված իրազեկման աշխատանքներին</p>	
--	--	--